

**ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ ռեկտոր, Բ.Գ.Պ. պրոֆեսոր

\_\_\_\_\_ Գ.Խաչատրյան

“ \_03\_ ” \_\_04\_\_\_\_\_ 2010թ.

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԱՐԶԱՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ**

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գլխխորհրդում

(արձանագրություն թիվ 3 “\_03\_” \_\_04\_\_\_\_\_ 2010թ.)

# 1. Ընդհանուր դրույթներ

1.1. Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի մարզառազմահայրենասիրական դաստիարակության կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) ինստիտուտի կառուցվածքային ենթաստորաբաժանում է, որի հիմնական նպատակներն են ինստիտուտում գործող մարզառազմահայրենասիրական կառույցների աշխատանքներին աջակցումը, ՎՊՄԻ շրջանակներում անցկացվող մարզական, հայրենասիրական միջոցառումների համակարգումը, ուսանողության շրջանում հայրենասիրական դաստիարակությունը:

1.2 Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրության, ՎՊՄԻ կանոնադրության համապատասխան:

1.3 Կենտրոնն ունի ՎՊՄԻ-ի խորհրդանշանով ձևաթուղթ (պաշտոնաթուղթ):

1.4 Կենտրոնը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ՎՊՄԻ ռեկտորի ներկայացմամբ՝ ՎՊՄԻ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

1.5 Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել ՎՊՄԻ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

# 2. Խնդիրներն ու գործառույթները

2.1 Կենտրոնի խնդիրներն են.

2.1.1 ՎՊՄԻ ուսանողների մարզառազմահայրենասիրական ունակությունների զարգացման խթանումը:

2.1.2 Միջբուհական մարզառազմական կապերի ստեղծումը:

2.1.3 Ներինստիտուտային, արտաինստիտուտային և միջբուհական մարզական, հայրենասիրական միջոցառումների (մրցույթներ, փառատոներ, մրցումներ, սպարտակիադաներ) անցկացումը:

2.1.4 Մարզառազմահայրենասիրական թեմաներով դասախոսությունների, սեմինարների, քննարկումների կազմակերպումը:

5 Ֆիլմերի, ներկայացումների, գեղարվեստական երկերի դիտումների քննարկումների միջոցով ուսանողության մեջ մարզական պատրաստականության հայրենասիրության զարգացումը:

2.2 Կենտրոնի գործառույթներն են.

2.2.1 Օժանդակում է ՎՊՄԻ-ի ֆակուլտետների և այլ ստորաբաժանումն նախաձեռնած մարզառազմական միջոցառումներին:

2.2.2 Կազմակերպում և իրականացնում է մարզական, հայրենասիրական միջոցառումներ, այդ թվում՝ սպարտակիադաներ, արշավներ, ուսանողն հանդիպումներ մարզաշխարհի, զինված ուժերի գործիչների հետ, քննարկումներ, ՎՊՄ և այլ բուհերի մարզառազմական կյանքի զարգացման միտումների օրինաչափությունների վերաբերյալ հայրենասիրական դասախոսություններ սեմինարներ, ֆիլմերի, ներկայացումների դիտումներ, մարզառազմական միջոցառումներ:

2.2.3 ՎՊՄԻ-ի մարզառազմական կյանքին ուսանողության ակու մասնակցությունն ապահովելու, շնորհալի ուսանողներին հայտնաբերելու նպատակով ստեղծում է ակումբներ, խմբակներ, կազմակերպում է մրցումներ, մրցույթներ, սահման (է դրանց գործունեության կարգը:

2.2.4 Կենտրոնի խնդիրներն իրականացնելու նպատակով ՎՊՄԻ-ի ուսանողներ կազմում է կամավորների խմբեր, համակարգում է դրանց գործունեությունը:

2.2.5 ՎՊՄԻ դասախոսների և ուսանողների շրջանում անցկացնում է ՎՊՄԻ-ի մարզառազմահայրենասիրական կյանքին վերաբերող սոցիոլոգիական հարցումներ, որոնց արդյունքում ՎՊՄԻ-ի ռեկտորատին, գիտական խորհրդին ներկայացնում է համապատասխան զեկույցներ և առաջարկություններ:

2.2.6 Համակարգում է մարզակուլմբի, հրաձգարանի, մարզական այլ խմբակ գործունեությունը:

2.2.7 Համագործակցում է ինստիտուտի արհկոմի և ուսանողական խորհրդի հետ

### 3. Կենտրոնի կառուցվածքը և կառավարումը

3.1 Կենտրոնի աշխատանքների համակարգումը ՎՊՄԻ-ի ռեկտորի համապատասխան հրամանով վերապահվում է ՎՊՄԻ-ի պրոռեկտորներին:

3.2 Կենտրոնն անմիջականորեն ղեկավարում է Կենտրոնի տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՎՊՄԻ-ի ռեկտորը: Կենտրոնի հաստիքացուցակը սահմանում է ՎՊՄԻ-ի ռեկտորը:

3.3 Կենտրոնի տնօրենը՝

3.3.1 կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է Կենտրոնի ընթացիկ գործունեությունը:

3.3.2 Ապահովում է Կենտրոնի հիմնական գործառույթների իրականացումը, լուծում դրանցից բխող հիմնախնդիրները, աշխատողներին տալիս է համապատասխան ցուցումներ և հանձնարարականներ, ապահովում Կենտրոնի և այլ ստորաբաժանումների փոխհարաբերությունները,

3.3.3 ստորագրում է Կենտրոնի անունից կազմված փաստաթղթերը, Կենտրոնի լիազորությունների շրջանակներում նախապատրաստում զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ և այլ փաստաթղթեր,

3.3.4 Կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման հետ կապված՝ կարող է հրավիրել խորհրդակցություններ, ըստ անհրաժեշտության՝ ՎՊՄԻ-ի ռեկտորին կամ Կենտրոնի գործունեությունը համակարգող պրոռեկտորին ներկայացնել համապատասխան զեկույց և առաջարկություններ ՎՊՄԻ-ի՝ Կենտրոնի գործունեությանն առնչվող համապատասխան ստորաբաժանումների կողմից կատարվող աշխատանքների վերաբերյալ,

3.3.5 պատասխանատվություն է կրում Կենտրոնի կողմից ղեկավարվող ստորաբաժանումների և առանձին աշխատակիցների ուժերով իրականացվող, աշխատանքների որակի և առկա խնդիրների հնարավորինս պատշաճ ու արդյունավետ լուծման համար: